

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ԿԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գևորգ Բաղդասարյան

*ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության
և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոփոխելու հնարավորությունը բացառություն է դատական քննության սահմանների ընդհանուր կանոնից: Դրա գործադրման սահմաններից կախված՝ գրականության մեջ առանձնացվում է դատական քննության սահմանների պատմական երեք մոդել.

1. Ստատիկ (կոշտ, անփոփոխ) սահմանների մոդել (չի նախատեսում արդեն իսկ սկսված վարույթում մեղադրանքի փոփոխման հնարավորություն),

2. Ազատ սահմանների մոդել (բնորոշվում է մեղադրանքի սահմանների բացակայությամբ. այն կարող է կամայական ընդարձակվել, փոփոխվել դատական քննության ընթացքում),

3. Հարաբերական-փոփոխելի (հարաբերական-ազատ կամ հարաբերական-կոշտ) սահմանների մոդել (մեղադրանքը կարող է փոփոխվել օրենքով խիստ սահմանափակված դեպքերում՝ որոշակի պայմանների և ամբաստանյալի իրավունքների պաշտպանության երաշխիքների պահպանմամբ)¹:

Դատարանում մեղադրանքի փոփոխման սահմանների, դրա նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցերը կարևոր նշանակություն ունեն ինչպես դատական քննության սահմանները մոդելային պատկանելության տեսական հիմնախնդրի որոշակիացնելու, այնպես էլ այդ ինստիտուտի կիրառման միասնական պրակտիկա ապահովելու համար:

Մեղադրանքի փոփոխման սահմանները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված է մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոփոխելու երկու ռեժիմ, ինչն արդեն իսկ բացառում է դատական քննության սահմանների պատկանելությունն առաջին և երկրորդ մոդելներին: Առաջին ռեժիմի գործադրման հիմքն այնպիսի հանգամանքների ի հայտ գալն է, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում: Մեղադրանքի փոփոխման այս ռեժիմը գործադրվում է, եթե նոր հանգամանքն ի հայտ գալուց հետո գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը փոփոխել առանց դատական քննությունը հետաձգելու, այսինքն՝ եթե ի հայտ եկած հանգամանքը կամ դրվագը դատական քննության սահմաններում կատարված քննությամբ դեռևս չի հաստատվել, և դրա ուղղությամբ անհրաժեշտ է կատարել քննչական գործողություններ: Մեղադրանքի փոփոխման երկրորդ ռեժիմը գործադրվում, և մեղադրանքը

¹ St' u Хохряков М. А. Пределы судебного разбирательства уголовных дел в суде первой инстанции: законодательство, теория, практика. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2013, էջ 16:

փոփոխվում է առանց դատական քննությունը հետաձգելու, եթե մինչդատական վարույթում անհայտ կամ հայտնի, բայց չհաստատված հանգամանքը հաստատվում է դատարանում՝ այդպիսով վկայելով մեղադրանքը փոփոխելու անհերքելի անհրաժեշտության մասին: Թեև մեղադրանքի փոփոխման երկրորդ ռեժիմի օրենսդրական ձևակերպումից կարող է թվալ, թե այն, իր կիրառման հիմքի առերևույթ պարզությամբ և հատկապես քննչական գործողությունների կատարում չենթադրելու հանգամանքով պայմանավորված, աչքի չի ընկնում հիմնախնդրային բնույթով, այնուամենայնիվ դրա կիրառման գործնական հարցերն իրականում պակաս խնդրահարույց չեն:

Այսպես, *Սուրեն Նալբանդյանի* գործով որոշմամբ արտահայտված անվիճելի նախադեպային դիրքորոշումն այն մասին, որ մեղադրանքը երկրորդ ռեժիմով կարող է փոփոխվել նաև այն դեպքում, երբ փոփոխման հիմք հանդիսացող հանգամանքը հայտնի էր կամ կարող էր հայտնի լինել մինչդատական վարույթում¹, հիմք է հանդիսացել պնդման, թե «(..) մեղադրողը կարող է մինչև դատարանի կողմից խորհրդակցական սենյակ հեռանալը ազատորեն սեփական հայեցողությամբ փոխել ինչպես մեղադրանքի փաստական կողմը, այնպես էլ իրավական գնահատականը: Այս ռեժիմով մեղադրանքի փոփոխման կամ լրացման համար բավարար է միայն մեղադրանքը պաշտպանող դատախազի դիրքորոշումը, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազարկում է սկզբնական մեղադրանքով: (...) Ընդ որում՝ օրենսդիրը որևէ պահանջ չի սահմանել փոփոխվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ լրացվող փաստական հանգամանքները կարող են մեղադրանքի կողմին հայտնի լինել նաև նախնական քննության ընթացքում, հաստատված լինել գործով ձեռք բերված ապացույցներով, սակայն ընդգրկված չլինել մեղադրանքի ձևակերպման մեջ և չվերագրվել որպես մեղադրյալի կողմից կատարված հանցագործության հատկանիշ»²: Սույն մոտեցումը, սակայն, նույնացրել է «հայտնի» և «հաստատված» հասկացությունները՝ արդյունքում սխալ մեկնաբանելով վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որում խոսվում է մինչդատական վարույթում հայտնի և ոչ թե հաստատված փաստական հանգամանքների հիմքով մեղադրանքը փոփոխելու հնարավորության մասին: Այդ մոտեցումը հաշվի չի առնում նաև *Արսեն Սերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընթացակարգը կիրառելի է միայն դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման պարագայում(..)»³:

Այս դիրքորոշումն ուշագրավ է նախ նրանով, որ այն դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումը համարում է մեղադրանքի փոփոխման պայման և բացառում մեղադրանքի ցանկացած փոփոխություն, որը չի հանդիսանում հենց դատարանում ապացույցների հետազոտման արդյունք: Քննարկվող ռեժիմի օրենսդրական ձևակերպումից էլ, թերևս, ակնհայտ է, որ մեղադրանքի փոփոխման անհրա-

¹ Տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԲՐԴ2/0144/01/09 որոշման 20-րդ կետը:

² Հ. Սարգսյան, Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի. //ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014թ., էջ 308:

³ Տե՛ս Արսեն Մկրտիչի Սերոբյանի և Էդվարդ Վահանի Պետրոսյանի վերաբերյալ ԵԱԲԴ/0002/01/13 քրեական գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման 23-րդ կետը:

ժեշտությունը պետք է լինի *դատարանում հետազոտված ապացույցների անհերքելի վկայություն*։ Իսկ քննադատվող մոտեցումը ապացույցների հետազոտումը՝ որպես մեղադրանքի փոփոխման պայման, դարձնում է ակնհայտ ձևական և թույլ է տալիս մեղադրանքը փոփոխել նաև այն դեպքում, երբ դրանում ներառվող հանգամանքներն ընդհանրապես կապ չունեն հետազոտված ապացույցների հետ։ Այլ կերպ ասած՝ նշված մոտեցումը հնարավոր է համարում հաղթահարել մեղադրանքը փոփոխելիս «ապացույցներ հետազոտելու» օրենսդրական պայմանը և մեղադրանքը փոփոխել ցանկացած, թեկուզ մեկ ապացույց հետազոտելով, որը ոչ միայն չի հաստատում փոփոխվող փաստական հանգամանքները, այլև ընդհանրապես կապ չունի դրանց հետ։

Բացի այդ, *Սուրեն Նալբանդյանի* գործով դիրքորոշումը, հակառակ քննարկվող մոտեցման, իրականում հնարավոր չի համարում դատարանում մեղադրանքի փոփոխումը զուտ արարքի իրավական գնահատականի մասով։ Բանն այն է, որ ապացույցների հետազոտումը՝ որպես մեղադրանքի փոփոխման պայման, անմիջականորեն կապված է մեղադրանքի փաստական կողմի հետ, և դրա անմիջական արդյունքում փոփոխվել կարող են բացառապես մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները։ Արարքի իրավաբանական որակումը, արտահայտելով մեղադրանքի փաստ-իրավունք բաղադրիչների կապը, չի տեղավորվում ապացույց-փաստ կապի շրջանակներում, ուստի դրա փոփոխությունը չի կարող հանդիսանալ ապացույցների հետազոտման անմիջական արդյունք, ինչը նշանակում է, որ մեղադրանքի իրավական տարրը՝ իրավաբանական որակումը, ինքնուրույն, առանց փաստական հանգամանքների փոփոխության դատարանում փոփոխվել չի կարող։ Քրեական դատավարության նոր օրենսգրքի շրջանառվող նախագիծն այս խնդիրը լուծում է մեղադրանքի փաստական և իրավական տարրերի փոփոխման հնարավորությունների հստակ տարանջատման միջոցով։ Նախագիծը հնարավոր է համարում արարքի իրավաբանական որակման փոփոխությունը մինչև դատարանի առանձին (խորհրդակցական) սենյակ հեռանալը՝ առանց այն դատական քննության որևէ արդյունքով պայմանավորելու։

Մեղադրանքի փոփոխման ռեժիմների գործադրման փուլային սահմանները, ի տարբերություն դրանց առարկայական սահմանների, միասնական են։ մեղադրանքը երկու ռեժիմներով էլ կարող է փոփոխվել բացառապես առաջին ատյանի դատարանում։ *Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը չիրացնելով՝ մեղադրողը քրեական գործի հետագա քննությունների ընթացքում զրկվում է նման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից։ Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև այն իրավիճակը, երբ վերադաս դատարանի կողմից կարող է բեկանվել գործով կայացված դատավճիռը և գործն ուղարկվել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որպեսզի նոր քննության ընթացքում մեղադրողը հնարավորություն ստանա շտկելու նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված բացթողումը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի գործադրմամբ փոփոխի առաջադրված մեղադրանքը։ Նման մոտեցման դեպքում ուղակիորեն կիմաստազրկվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը»¹։

¹ Տե՛ս Արմեն Զիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի վերաբերյալ ԵԵԴ/0044/01/11 քրեական գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 23-րդ կետը։

Վերաքննիչ վարույթում մեղադրանքի փոփոխման արգելքը պայմանավորված է *Գեղամ Ղազարյանի* գործով որոշմամբ վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված այն իրողությամբ, որ «(...) վերաքննիչ դատարանում մեղադրանքի պաշտպանություն չի իրականացվում»¹: Մեղադրանքը փոփոխելու հնարավորությունը, հանդիսանալով մեղադրանքի պաշտպանության գործառույթի բաղադրիչ, չի կարող իրացվել այդ գործառույթի իրականացումն ավարտված լինելու պայմաններում, չի կարող ունենալ իրականացման ավելի լայն սահմաններ, քան հենց մեղադրանքի պաշտպանության գործառույթը: Վերաքննիչ վարույթում մեղադրանքի փոփոխման արգելքը, մեղադրանքի պաշտպանության գործառույթի փուլային սահմանազանցումը և վերանայող ատյանում քննության սահմանների ընդլայնումը բացառելուց բացի, պաշտպանության իրավունքի երաշխավորման խնդիր է լուծում: Այն բացառում է առաջին ատյանի դատարանում անցանկալի դատական գնահատականի արժանացած մեղադրանքի ճշգրտման, լրացման կամ այլ փոփոխության շնորհիվ այն նոր դատական գնահատման արժանացնելու մեղադրողի հնարավորությունը: Ավելին, վճռաբեկ դատարանն այդ հնարավորությունը բացառում է ոչ միայն հենց վերաքննիչ վարույթում, այլև թույլ չի տալիս դատական ակտի՝ այդ նպատակով բեկանման միջոցով շրջանցել փուլային արգելքն ու փոփոխել մեղադրանքը առաջին ատյանի դատարանում՝ գործի նոր քննության շրջանակներում: Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն արգելում է մեղադրանքը փոփոխման ենթակա լինելու պատճառով և մեղադրողին այն փոփոխելու հնարավորություն տալու համար դատական ակտը բեկանելն ու գործը նոր քննության ուղարկելը և նոր քննության շրջանակներում մեղադրանքը փոփոխելը:

Միևնույն ժամանակ, այդ արգելքը չի բացառում դատավճիռը բեկանված և նոր քննության ուղարկված քրեական գործով մեղադրանքի փոփոխությունն առհասարակ: Սահմանված արգելքը վերաբերում է միայն հատկապես մեղադրանքը փոփոխելու համար դատական ակտը բեկանելուն, գործը նոր քննության ուղարկելուն և դրա ընթացքում մեղադրանքը փոփոխելուն: Իսկ որևէ դատական սխալի հիմքով դատական ակտը բեկանելուց հետո քրեական գործի նոր քննության ընթացքում մեղադրանքի պաշտպանության գործառույթն իրականացվում է առանց սահմանափակումների՝ դրանից բխող բոլոր դատավարական լիազորությունների իրականացման, այդ թվում մեղադրանքի փոփոխման հնարավորությամբ:

Ղատական վերահսկողությունը մեղադրանքի փոփոխման առաջին ռեժիմի սահմանադրաիրավական բովանդակության բաղադրիչներից մեկն է և որոշիչ հանգամանք՝ այն իր «ոչ մրցակցային» իրավանախորդից տարանջատելու համար: Ղատական վերահսկողությունը, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման, արտահայտվում է նրանում, որ դատական նիստի հետաձգումը դատարանի հայեցողական լիազորությունն է, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դատարանը կարող է բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում: Բացի այդ, դատարանն արձանագրում է, որ քննարկվող ռեժիմի գործադրման հիմքի և պայմանի առկայության գնահատումը վերապահված է դատարանին²:

¹ Տե՛ս Գեղամ Միսակի Ղազարյանի վերաբերյալ ԱՐԴ/0121/01/11 քրեական գործով 2012 թվականի մարտի 30-ի որոշման 28-րդ կետը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-872 որոշման 5-րդ կետը:

Այն, որ դատարանն է դատական հայեցողության շրջանակներում որոշում ի հայտ եկած հանգամանքի՝ նախկինում օբյեկտիվորեն անհայտ լինելը և գնահատում մեղադրանքը փոփոխելու համար դատական քննությունը հետաձգելու անհրաժեշտությունը այդ ռեժիմի դատավարական կարգից, առնվազն ենթադրելի է: Մյուս կողմից, քրեադատավարական օրենքը որևէ հիմք չի տալիս պնդելու, թե օրենքով նախատեսված հիմքի և պայմանի առկայությունը փաստելուց հետո դատարանը կարող է հայեցողություն դրսևորել դատական քննությունը հետաձգելու և մեղադրողին մեղադրանքը փոփոխելու հնարավորություն տալու հարցում: Ավելի պարզ՝ դատարանը չի կարող արձանագրել, որ ի հայտ է եկել նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանք, որը հիմք է մեղադրանքը փոփոխելու համար, գործի հանգամանքները թույլ չեն տալիս փոփոխել մեղադրանքը, և հայեցողաբար բավարարել կամ չբավարարել այդ կապակցությամբ մեղադրողի միջնորդությունը: Այդպիսի հայեցողությունը, որը չունի իրավական հիմք և սահմանափակման չափանիշներ, իրավաչափ համարվել չի կարող: Հետևաբար, դատական հայեցողության է ենթակա բացառապես քննարկվող ռեժիմի գործադրման հիմքի և պայմանների առկայության գնահատումը, որից հետո արդեն հայեցողություն գոյություն ունենալ չի կարող:

Ընդունելի ու տրամաբանական լինելու հետ մեկտեղ, սակայն, դատական այդ հայեցողությունը ևս զերծ չէ հիմնախնդիրներից: Բանն այն է, որ դատարանը դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ մեղադրողի միջնորդության շրջանակներում ըստ էության քննարկում է նաև այն հարցը, թե գործի հանգամանքները հնարավորություն տալիս են արդյոք մեղադրանքը փոփոխել՝ առանց դատական քննությունը հետաձգելու, թե դրա համար անհրաժեշտ է հետաձգել դատական քննությունը: Միջնորդության կապակցությամբ պատճառաբանված որոշմամբ փաստելով մեղադրանքի փոփոխման հիմք հանդիսացող նոր հանգամանքի գոյությունը, բայց նաև դրա համար դատական քննությունը հետաձգելու անհրաժեշտության բացակայությունը՝ դատարանն այդպիսով իր դիրքորոշումն է արտահայտում մեղադրանքի փոփոխման անհրաժեշտության և միաժամանակ մեղադրողի կողմից ընտրված ռեժիմի՝ տվյալ դեպքում անընդունելիության մասին՝ փաստորեն հուշելով նրան, որ մեղադրանքը կարող է փոփոխվել առանց դատական քննությունը հետաձգելու: Այսպիսի կարգավորումը չի բխում նույն գործով ՍԴ իրավական դիրքորոշումներից¹ և ընդունելի չէ:

Սահմանադրական դատարանը դատական վերահսկողությունը տարածելի է համարում նաև դատական քննությունը հետաձգելուց հետո կատարվող քննչական գործողությունների նկատմամբ՝ շեշտելով դատական քննությունը հետաձգելուց հետո քրեական գործը դատարանի վարույթում մնալու հանգամանքը և սահմանելով, որ եթե որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը (լրացումը) պահանջի նոր ապացույցների ձեռքբերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ (դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո) կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցներ (նոր վկաների կանչ, փորձաքննությունների նշանակում, ապացույցների հետազոտում կամ փաստաթղթերի և այլ նյութերի պահանջում և այլն)²:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-872 որոշումը:

² ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-934 որոշման 7-րդ կետը:

Ընդունելով քննարկվող ռեժիմի բովանդակության սահմանադրաիրավական սահմանափակ մեկնաբանության նշանակությունը՝ այն լրացուցիչ նախաքննության ինստիտուտից տարանջատելու տեսանկյունից, միաժամանակ կարծում ենք, որ այն ևս չի բխում քննարկվող ինստիտուտի տրամաբանությունից և չունի այդպիսի մեկնաբանության իրավական հիմքեր: Ղատավարական գործողությունների՝ դատական քննության փուլում հասանելիությունը, քրեադատավարական օրենքով սահմանված փուլային ընդհանուր չափանիշից բացի, որոշվում է նաև կոնկրետ գործի դատական քննության սահմաններով: Ղատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցները դատական քննության սահմաններում տեղավորվող դատավարական գործողություններն են, որոնք իրականացվում են արդեն իսկ առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունն ստուգելու համար: Ղատական վարույթներում ընդհանրապես կատարումը հնարավոր, բայց տվյալ գործով դատական քննության սահմաններից դուրս, այսինքն՝ մեղադրանքում չներառված հանգամանքի ստուգմանն ուղղված, գործողությունների կատարումը չի կարող համարվել դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոց: *Հետևաբար, դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցների գործադրման արդյունքում մեղադրանքը փոփոխվում է երկրորդ ռեժիմով, իսկ առաջին ռեժիմը գործադրվում, այսինքն՝ դատական քննությունը հետաձգվում է քննչական գործողություններ կատարելու համար հենց այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում հասանելի միջոցները հնարավորություն չեն տվել ամբողջական քննություն կատարել նոր հանգամանքի շուրջ և արդյունքում փոփոխել մեղադրանքը:*

Բացի այդ, եթե նկատի ունենանք, որ Սահմանադրական դատարանն այդ դիրքորոշմամբ նկատի ունի գործողությունների՝ դատական քննության ընթացքում հասանելիության միայն փուլային հատկանիշը, ապա այդպիսով առնվազն հնարավոր չի դարձնում ապահովել քննության լրիվությունն այն հանգամանքի կապակցությամբ, որը ենթակա է ներառվելու մեղադրանքի ծավալի մեջ: Նման մեկնաբանության դեպքում մի կողմից հնարավոր է համարվում դատարանում ի հայտ եկած հանգամանքի ներառումը մեղադրանքի ծավալում, մյուս կողմից բացառվում է մեղադրանքի փոփոխման համար հիմք հանդիսացած հանգամանքի շուրջ այնպիսի քննության հնարավորությունը, որն իրականացվել է նույն մեղադրանքում ներառված այլ հանգամանքների հաստատման կամ հերքման համար: Ղատական վարույթում հասանելի դատավարական միջոցները կարող են բավարար չլինել առանձին հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար՝ պայմանավորված դրանց վերաբերյալ փաստական տվյալների և ապացուցման սահմանափակ շրջանակի միջոցների անհամապատասխանությամբ: Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որ ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել նախկինում առաջադրված մեղադրանքը հաստատելու համար¹, կարծում ենք, ողջամիտ ու բավարար պայման է՝ բացառելու համար հետաձգված դատական քննության ընթացքում կատարված քննչական գործողությունների արդյունքների օգտագործմամբ արդեն իսկ առաջադրված մեղադրանքը վերահիմնավորելու հնարավորությունը չեզոքացնելու համար, որն անհարկի չի սահմանափակում նոր ի հայտ եկած հանգամանքների շուրջ պատշաճ քննության

¹ ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-934 որոշման 7-րդ կետը:

դատավարական միջոցները: Այդ պայմանը բացառում է կատարված գործողությունների արդյունքում ստացված, նոր ի հայտ եկած հանգամանքի հետ մեղադրանքում արդեն իսկ ներառված հանգամանքների կապի ուժով նաև դրանց վերաբերելի ապացույցների օգտագործումը՝ դրանք վերահիմնավորելու համար:

Ո՛չ քրեադատավարական օրենքը և ո՛չ էլ դրա դատական մեկնաբանությունները մեղադրանքի փոփոխման երկրորդ ռեժիմի գործադրման նկատմամբ առաջին ռեժիմին բնորոշ դատական վերահսկողություն չեն նախատեսում: Մեղադրողը մեղադրանքը փոփոխելու իր լիազորությունն իրացնում է անկախ այդ կապակցությամբ դատարանի վերաբերմունքից և առանց դատարանի թույլտվության: Դատարանը որևէ կերպ չի արձանագրում մեղադրանքի փոփոխման լիազորության իրացման իրավաչափությունը, դրա պայմանների պահպանումն ու փոփոխված մեղադրանքի ընդունելիությունը: Փոփոխված մեղադրանքի վերաբերյալ իր գնահատականը դատարանն արտահայտում է ընդհանուր կարգով՝ դատական ակտ կայացնելիս: Նման կարգավորումը խնդրահարույց է *Արսեն Մերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի* գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշման համատեքստում, որ «դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու մասին որոշման կայացումը հավասարազոր է օրենքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իրավական հնարավորությունը չօգտագործելուն: Այս դեպքում ևս դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները, դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատարանը պարտավոր է դատաքննության արդյունքներով կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ¹»:

Ստացվում է, որ մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կարգը չպահպանելու դեպքում մեղադրանքը և դատական քննության սահմանները համարվում են չփոփոխված, սակայն այդ հանգամանքն ընկալելի չէ դատավարության կողմերին: Մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու իր հնարավորության ոչ պատշաճ իրացումը որևէ դատավարական միջոցով չի արձանագրվում դատարանի կողմից, և մեղադրողն ու դատավարության մյուս մասնակիցները մեղադրանքը և դատական քննության սահմանները համարում են փոփոխված: Արդյունքում մեղադրանքի պաշտպանության և դրանից պաշտպանության դատավարական գործառույթներն իրականացվում են փոփոխված մեղադրանքի սահմաններում, որը, պարզվում է, փոփոխված չէր, և դատական քննությունն ընթանում է դրա իրավաչափ սահմաններից դուրս: Այլ կերպ՝ իրականում չփոփոխված մեղադրանքը ձևականորեն փոփոխված լինելու ուժով փոփոխում է դատական քննության սահմանները և հնարավոր դարձնում քննություն կատարել այն հանգամանք(ներ)ի շուրջ, որոնք դուրս են օրենքով սահմանված կարգով ներկայացված մեղադրանքից և դրանով որոշվող դատական քննության սահմաններից:

¹ Տե՛ս Արսեն Մկրտիչի Մերոբյանի և Էդվարդ Վահանի Պետրոսյանի վերաբերյալ ԵԱԲԴ/0002/01/13 քրեական գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման 23-րդ կետը:

Մեղադրանքի փոփոխման պատշաճության՝ դատավարության մասնակիցների համար ընկալելի գնահատման մեխանիզմի բացակայությունը ինչպես այն փոփոխող սուբյեկտի, այնպես էլ պաշտպանության կողմի համար մեղադրանքը և դատական քննության սահմանները դարձնում է առնվազն անորոշ՝ այդպիսով նրանց դատավարական գործառույթների պատշաճ իրականացումը գործնականում դարձնելով անհնարին:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով նախատեսված՝ մեղադրանքի փոփոխման միակ ռեժիմը գոյություն ունեցող երկու ռեժիմների հիբրիդն է: Այն թույլ է տալիս մեղադրանքը փոփոխել միայն առանց նոր քննչական գործողություններ կատարելու համար դատական քննությունը հետաձգելու հնարավորության, և այն դեպքում, երբ ի հայտ են եկել նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքներ: Այդպիսով նախագիծը բացառում է մեղադրանքի փոփոխման առաջին ռեժիմը՝ չեզոքացնելով լրացուցիչ նախաքննության և մեղադրանքի փոփոխման դատավարական ինստիտուտների վերջին նմանությունները և վերացնում վերջինիս կիրառության ժամանակ գործնականում առաջացող և միգուցե այդ նմանությունների չեզոքացման, վերջինիս քողարկված կիրառության բացառման նպատակով այդ ինստիտուտի առանձին մեկնաբանություններով խորացված հիմնախնդիրները:

Նախագիծը վերաիմաստավորել է մեղադրանքի փոփոխման ռեժիմը որոշող՝ դրա դատավարական կարգի բաղադրիչը՝ դատական քննությունը հետաձգելը՝ այն դիտելով որպես մեղադրանքը փոփոխելու մասին որոշում կայացնելու հնարավորության ապահովման տեխնիկական միջոց, որն առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքը փոփոխելու ռեժիմի համար ներկայում օրենսդրորեն նախատեսված չէ: Մեղադրանքի փոփոխման հիմքերի և պայմանների առկայության դեպքում մեղադրողի միջնորդությամբ դատարանը հետաձգում է դատական նիստը՝ վերջինիս տալով մեղադրանքը փոփոխելու մասին որոշում կայացնելու տեխնիկական հնարավորություն: Այսպիսով նախագիծն ապահովում է նաև մեղադրանքի փոփոխման նկատմամբ նախնական վերահսկողություն՝ դրա իրավաչափության գնահատման դատավարության մասնակիցների համար որոշակի արդյունքով՝ այդ կերպ բացառելով մեղադրանքի և դրա ուժով՝ դատական քննության սահմանների ոչ իրավաչափ փոփոխությունը:

Դժվար չէ նկատել, որ մեղադրանքի փոփոխման ինստիտուտի դատական մեկնաբանությունները շարունակաբար հնարավորինս նեղացրել են դրա սահմաններն ու ընդլայնել դրա նկատմամբ դատական վերահսկողությունը՝ քրեական հետապնդման մարմնի կողմից թույլ տրված որևէ բացթողում լրացնելու, սխալ ուղղելու կամ մեղադրանքը դատարանում վերահիմնավորելու հնարավորությունը չեզոքացնելու ընդգծված նկատառումով: Անկախ դրանց արդյունքում ի հայտ եկած գործնական խնդիրներից՝ դրանք միանշանակ հերքում են պնդումը, թե «դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ռեժիմների առաջնային նպատակն է հնարավորություն ընձեռել դատախազին վերացնելու մինչդատական վարույթում թույլ տրված սխալներն ու բացթողումները, ուղղելու մեղադրանքի ձևակերպման մեջ առկա թերությունները և լրացնելու մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների շրջանակը փրկելով մեղադ-

րանքի կողմին արդարացման դատավճռից»¹: Այդ մեկնաբանություններից և քրեական դատավարության օրենսգրքի նախագծի կարգավորումներից նկատելի է մեղադրանքի փոփոխման ինստիտուտի աստիճանական սահմանափակման միտումը, որը ենթադրում է դատական քննության սահմանների փոփոխելի մոդելի շրջանակներում անցում հարաբերական-ազատ տեսակից հարաբերական-կոշտի: Այդ զարգացման ընթացքում ի հայտ եկած գործնական խնդիրները հաջողությամբ լուծված են քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում՝ քննարկվող ինստիտուտի հայեցակարգային կատարելագործման և դրա առանձին հարցերի բարեփոխումների արդյունքում:

ГРАНИЦЫ ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ В СУДЕ И СУДЕБНЫЙ КОНТРОЛЬ ЗА ИЗМЕНЕНИЕМ ОБВИНЕНИЯ

Геворг Багдасарян

Кандидат юридических наук

Заместитель начальника управления поддержания обвинения и обжалования судебных актов Генеральной Прокуратуры РА

Статья посвящена проблеме границ применения режимов изменения обвинения в суде, а также проблеме судебного контроля за изменением обвинения. Автор обсуждает вопрос возможности изменения обвинения в силу обстоятельств, установленных еще в досудебном производстве и обосновывает, что режим изменения обвинения без отложения судебного следствия может применяться, если обстоятельство было известным, но не установленным в досудебном производстве. Автор также не считает возможным изменение в суде лишь юридической оценки деяния, так как любое изменение обвинения должно быть результатом исследования доказательств по делу, а непосредственная связь между юридической оценкой и доказательствами не существует.

В статье отмечается также отсутствие судебного контроля при изменении обвинения без отложения судебного следствия и обсуждаются обусловленные этим практические проблемы.

¹ Հ. Սարգսյան, Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի. // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014թ., էջ 309:

THE LIMITS FOR CHANGE OF ACCUSATION AT COURT AND ITS JUDICIAL CONTROL

Gevorg Baghdasaryan

Deputy Head of the Department of Criminal Charge and Appealing at the Office of General Prosecutor of the RA, Candidate of Legal Sciences

The article is devoted to the margins for implementation of two regimes for change of accusation at court and the judicial control on its performance. The author discusses the issue of change of the charge due to the circumstances established during pretrial proceedings, as well as the issues of change of merely legal assessment of the charge, and expresses his disagreement to the approaches of possibility of such actions. The article also analyses the phase margins of change of accusation in the context of the legal approaches of the Court of Cassation.

The article discusses the absence of actual judicial control over the cases when the charge is changed in the absence of investigatory activities and the practical problems caused by the absence of such a control.

Բանալի բառեր՝ դատական քննության սահմանները, մեղադրանքի փոփոխում, դատական վերահսկողություն, արարքի որակում, փուլային սահմաններ:

Ключевые слова: границы судебного следствия, изменение обвинения, судебный контроль, квалификация деяния, стадийные границы.

Key words: *limits of judicial review, change the accusation, judicial control, act as such, qualification of act, phase margins.*